

ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԹԵԶԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ



ՁԵՌԱՄԲ ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՋԱՊԱՀՅԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՎԱԶԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ
ԲԱԳՐԱՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԼՍՏԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՇՈՏ ՎԱՐԴԱՊԵՏ-ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ
ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ



## Տ. ԱՇՈՏ ՎԱՐԴԱՊԵՏ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծնվել է 1972 թ. նոյեմբերի 4-ին Գորիսի շրջանի Տաթև գյուղում:

1979-1989 թթ. սովորել և ավարտել է տեղի Ս. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցը:

1989 թ. ընդունվել և 1995 թ. ավարտել է Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, ավարտաճառ պաշտպանելով «Հովհան Որոտնեցու կյանքն ու դավանաբանական հայացքները» թեմայով:

1995 թ. հոկտեմբերի 22-ին ձեռնադրվել է սարկավագ՝ ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի:

1995-1996 թթ. եղել է Մայր Աթոռի ձեռագրատան պատասխանատուն:

1996 թ. հունիսի 2-ին Մայր Աթոռում, ձեռամբ Տ. Շահե արքեպս. Աճեմյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1996 թ. հոկտեմբերից մինչև 2001 թ. դեկտեմբերը եղել է 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովի Մայր Աթոռի գրասենյակի պատասխանատուն:

2002 թ. մարտի 15-ին պաշտպանել է վարդապետական թեզ՝ «Անառակ որդու առակը հայ մեկնողական գրականության մեջ» թեմայով: